ՍԵՐԲ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ԴԻՄՈՒՄԸ ՀԱՄԱԾԽԱՐՀԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿԱՅԱՆՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՍԵՐԲ ԺՈՂՈՎՐԴԻՆ

Հարավսլավիայի օդային ռմբակոծումների նախօրյակին Սերբական Օրթոդոքս Եկեղեցու Գերագույն Հոգևոր Խորհուրդը և Եպիսկոպոսաց ժողովը համատեղ շրջաբերական էր հրապարակել, ուր վերստին կոչ էր արվում գտնել իրավիճակի խաղաղ կարգավորման ուղիներ: «Մարդկային փորձառությունը թե՛ հնում և թե՛ այսօր մեզ ուսուցանում է, որ պատերազմը և բռնությունը, հատկապես ներքին-էթնիկական շրջանակներում, իր ետևից թողնում է միայն ավերածություն և համընդհանուր դժբախտություն, որի արդյունքում երկարատև հոգևոր, բարոյական ու հասարակական խնդիրներ և ցավալի վերքեր են առաջանում... Մենք չենք կարող հավատալ, որ միջազգային հասարակայնությունը անզոր է դարձել միջադեպի կարգավորման խաղաղ ու մարդասիրական ճանապարհներ որոնելում», - ասվում է շրջաբերականում /Բելգրադ, 23 Մարտի, 1999/:

Սակայն այս կոչը անլսելի մնաց: Մարտի 24-ի երեկոյան ՆԱՏՕ-ի ինքնաթիռները հատեցին Հարավսլավիայի սահմանները:

Սերբական Եկեղեցին մարտի 25-ին կրկին դիմեց համայն աշխարհին հետևյալ շրջաբերականով.

«ՆԱՏՕ-ի կողմից մեր Հայրենիքի ռմբակոծումների և այս օրերին առաջացած դժբախտության պատճառով Սերբական Ուղղափառ Եկեղեցին դիմում է աշխարհի բոլոր պետությունների կառավարություններին՝ միջամտելու, որպեսզի այս ռմբակոծումները դադարեցվեն և բանակցությունների միջոցով արդարացի լուծում գտնվի ներկա ճգնաժամից դուրս գալու համար:

Սերբական Ուղղափառ Եկեղեցին դիմում է Սերբիայի և Հարավսլավիայի զինվորական և քաղաքացիական իշխանություններին, որպեսզի նրանք կատարեն հնարավոր ամեն ինչ խաղաղության հաստատման համար:

Մեզ հետ պատահած այս աղետի պահին մենք կոչ ենք անում Սերբիայի և սերբական սփյուռքի բոլոր թեմական առաջնորդներին, հոգևորականներին և Սուրբ Եկեղեցու ողջ հավատավոր ժողովրդին՝ բազմապատկել իրենց աղոթքները առ Ամենաբարին Աստված, Ով Տերն է խաղաղության, որպեսզի խաղաղություն շնորհվի մեր չարչարվող ու տառապող ժողովրդին և նաև մյուս բոլոր ազգերին, որոնք մեր կողքին են ապրում: Թող որ մեր այս Դիմումը, ուղղված աշխարհին և հայրենի ժողովրդին, չմնա միայն իբրև *ձայն բարբառոյ յանապատի*»:

ՊԱՎԼԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Սերբ Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք

Նախագահ Եպիսկոպոսաց Ժողովի եւ
Գերագույն Հոգեւոր Խորհրդի